

# Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն

## Դարուիի Յակոբեան Աղջկանց Երկրորդական Վարժարան

Վաթսունամեակի Յօրելենական Պաշտօնական Հանդիսութիւն 11.05.2000

Մեծայարգ հիւրեր ու ներկաներ,

Վաթսուն տարիներու ընթացքին Դարուիի Յակոբեան Աղջկանց Երկրորդական Վարժարանէն շրջանաւարտ եղած են աւելի քան հազար չորս հարիւր երիտասարդուհիներ որոնք կազմած են հաւանաբար հազարէ աւելի Հայ ընտանիքներ:

Վաթսուն տարիներու բերքը ազգային հարստութիւն մըն որ կ'ուճանայ սերունդէ սերունդ եւ որպէս Հայ գիտակից մայրերու յոյ կը շարունակէ մնալ մեր այլափոխուող ազգային ինքնութեան մշակութային ու բարոյական ամենակարեւոր պատմէշը: Վաթսուն տարիներու ընթացքին, ՀԲԸ Միութեան ղեկավարութեան հոգածութեամբ, հաւատաւոր տնօրէններու ու դաստիարակներու շունջով տոգորուած, դիմագրաւելով բազմատեսակ արտաքին վտանգներ ու դժուարութիւններ, Դարուիի Յակոբեան Աղջկանց Երկրորդական Վարժարանը կը շարունակէ իր առաքելութիւնը յուսալով աւելի պայծառ օրերու աւետումին:

Այս առիթով՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Շրջանակային Յանձնաժողովի անունով կը յայտնեմ մեր շնորհակալութիւնը անցեալի ու ներկայի բոլոր տնօրէններուն, դաստիարակներուն ու Կրթական Յանձնախումբերու անդամներուն, որոնք սերունդէ սերունդ փոխանցեցին իրենց վստահուած աւանդը:

Որպէս Հայ անհատ ու Լիբանանցի քաղաքացիներ մենք կ'ապրինք տագնապալի շրջան մը, յոյսի ու յուսալքումի միջեւ տատանելով: Քաղաքական, տնտեսական ու ընկերային յամեցող դժուարութիւններ կը պարտադրեն մեզի կատարել նոր հարցադրումներ որոնց պատասխանները պէտք է տրուին հաւաքական պատասխանատուութեամբ: Մեր ազգային նպատակներու անորոշութիւնը, արժէքներու աղաւաղումը, գոյութեանական մղձաւանջը իրենց սաստկացող բացասական ազդեցութիւններով ստեղծած են ճնշիչ մթնոլորտ մը ու մեզ կը մղեն անտարբերութեան, յուսախաբութեան ու դասալքութեան: Սակայն մեր ախտերուն բուժումը կարելի չէ գտնել Տէրեանական «հեռանալ, մոռանալ, ամէն ինչ, ամէնին մոռանալ» տրտունջներով:

Ընդհակառակը, երբ արտաքին ընկերա-տնտեսական պայմաններու բերմամբ անկարելի ըլլայ մեր ներկան բարելաւել պէտք է փորձենք ծրագրել՝ ապագան: Չօրակոչի ենթարկենք մեր բոլոր մտային, ոգեկան ու նիւթական կարողութիւնները, քննարկենք մեր

ներկան իր դրական ու բացասական երեւոյթներով, բազմաձայն ու բարձրաձայն ներկայացնենք մեր կարծիքը շինիչ առաջադրանքներով, սահմանենք մեր հիմնական նպատակները յառաջիկայ տասը, քսան ու հարիւր տարիներու համար նոյնիսկ եթէ անոնք երազային նկատուին ու ենթարկուին յարատեւ փոփոխութիւններու: Յստակացնենք մեր տեսիլքը ու արժեհամակարգը համադրական մօտեցումով: Տրամաբանական ու համոզիչ աշխատամիջոցներով ներգրաւենք, քաջալերենք երիտասարդ տարրեր իրենց պատասխանատու մասնակցութիւնը բերելու մեր հասարակական կեանքի բոլոր մարզերէն ներս: Կազմակերպենք մեր մտածողութիւնն ու գործունէութիւնը ապագայաւաց նպատակակէտերով: Վերաշարենք մեր առ աջնահերթութիւնները նոր հեռանկարներով: Հաւատաւոր ու հետեւողական աշխատանքով կարելի է յոյս ներշնչել ու հիւլէ առ հիւլէ կատարել փոփոխութիւններ նոյնիսկ յուսահատական կարծուող պարագաներուն:

Լիբանանը Սփիւռքի միակ երկիրն ուր օրինապէս Հայերուն արգիլուած է Հայ չմանալ՝ առ անց դաւանափոխութեան: Որպէս Հայ Համայնքի զաւակներ կը ծնինք ու կը մահանանք որպէս Հայ նոյնիսկ եթէ անձնական պարագաներու բերմամբ հեռանանք մեր հարազատ շրջանակէն: Լիբանանեան Հայրենիքի սահմանադրութիւնը մեզի շնորհած է Հայ մնալու բոլոր օրինական, բարոյական ու գործնական կարելիութիւնները: Մեզի կը մնայ յարմարիլ միջազգային ու տեղական յեղաշրջուող պայմաններուն, ընտրել ու իրացնել այն արժէքները որոնք չեն հակասեր մարդկային հիմնական իրաւունքներուն եւ մեր անձնական ու հաւաքական ամենօրեայ գործունէութեամբ բանիւ եւ գործով սատարել բարեկամեցողութիւններու ստեղծումին հանդէպ՝ մեր անձին, մեր համայնքին, մեր ազգային անժամանցելի իրաւունքներուն ու Հայաստանի Հանրապետութեան: Ինքնութիւնը կը յեղաշրջուի նոր թափանցումներու մասնակի գտումով ու կը գոյատեւէ եթէ անխուսաբելի փոփոխութիւններուն կարենայ ապահովել շարունակականութեան հաստատ հիմ մը անցեալի փորձառութիւններու օգտագործումով, ինքնավստահ հանդուրժողութեամբ, յուսախափութիւններու կարաւարումով եւ ներքին փոփոխութիւններ կռելու կարողութեամբ:

Մեր հասարակական կեանքը պէտք ունի նոր աւիւնի, մտածողութեան ու աշխատանքներու: Մարդուժը իր բոլոր տաղանդներով ու սերունդներով տեղ մը գոյութիւն ունի, մեր անմիջական շրջանակներուն մէջ, ընդհանրապէս կրաւորական կեցուածքով ու երբեմն անցեալի փորձառութիւններու յուսախաբութիւններէն դառնացած: Փնտրենք, գտնենք ու խրախուսենք զանոնք որպէսզի իրենց կամաւոր մասնակցութիւնը բերեն մեր հաւաքական ապագային ծրագրուած հունաւորումին:

Վերահաստատենք խախտուած փոխ-յարաբերութիւններ ու ամբացնենք թուլացած հաւատքներ ու մանաւանդ՝ չհեռանանք, չմոռանանք, չվիատինք:

Մկրտիչ Պուլտուրեան

[HOME](#)